



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸԼԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ  
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)  
N13(14) 2009թ. նոյեմբերի 21- դեկտեմբերի 20**

<i>1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ</i> .....	3
1.1 Օրենքներ.....	3
1.2 ՀՀ կառավարության որոշումներ .....	6
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ.....	8
<i>2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ</i> .....	10
<i>3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ</i> .....	11
3.1 Կառուցվածք և գործառույթներ .....	11
3.2 Ծրագրեր և կատարողականություն .....	11
3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների .....	12
3.4 Միջազգային համագործակցություն.....	12
3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում .....	13
3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն .....	13
3.7 Հարկային և մաքսային թվերի համառոտագիր .....	14

**1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ**

**1.1 Օրենքներ**

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 հոկտեմբերի, 2009թ., ՀՕ-194-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 60 (726), 02.12.09թ.
Ուժի մեջ է	1 հունվարի, 2010թ.

**Համառոտ նկարագիր**

Կատարված փոփոխությամբ և լրացումներով սահմանվում է ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները հարկային մարմին էլեկտրոնային եղանակով և փոստի միջոցով ներկայացնելու կարգը, ինչպես նաև այն իրավաբանական անձանց ցանկը, որոնց համար պարտադիր է ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների, այլ փաստաթղթերի և տեղեկությունների՝ էլեկտրոնային եղանակով ներկայացումը: 2010թ. հունվարի 1-ից վերոնշյալ հաշվետվությունների ու տեղեկությունների ներկայացումը պարտադիր է՝

ա) բանկերի, վարկային կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների արժեթղթերի շուկայում հաշվետու թողարկողների, ներդրումային ընկերությունների, կարգավորող շուկայի օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի, ապահովագրական ընկերությունների վերաապահովագրական ընկերությունների համար,

բ) «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն խոշոր համարվող կազմակերպությունների համար,

գ) նախորդ հաշվետու տարվա արդյունքներով 100 միլիոն դրամ և ավելի իրացման շրջանառություն (համախառն եկամուտ) ունեցող պետական կառավարչական հիմնարկների պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար,

դ) նախորդ հաշվետու տարվա արդյունքներով 100 միլիոն դրամ և ավելի իրացման շրջանառություն (համախառն եկամուտ) ունեցող՝ 50% և ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների համար,

իսկ 2010թ. հուլիսի 1-ից՝

նախորդ հաշվետու տարվա արդյունքներով 100 միլիոն դրամ և ավելի իրացման շրջանառություն (համախառն եկամուտ) ունեցող կազմակերպությունների համար:

Փաստաթուղթ	«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	Նոյեմբերի 18, 2009թ., ՀՕ-205-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 64 (730), 16.12.09թ.
Ուժի մեջ է	17 դեկտեմբերի, 2009թ., գործում է 3 տարի ժամկետով

**Համառոտ նկարագիր**

Կատարված փոփոխությամբ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ 29.06.2001թ. ՀՕ-195 օրենքի 1-ին հոդվածից հանվել են 8802 և 8803 ապրանքային դիրքերը, որոնք են համապատասխանաբար թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և 8802 ապրանքային դիրքում նշված թռչող ապարատների մասերը:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
------------	---

Ամսաթիվը և համարը	29 հոկտեմբերի, 2009թ., ՀՕ-203-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 60 (726), 02.12.09թ.
Ուժի մեջ է	1 հունվարի, 1 հուլիսի (օրենքի 1-ին հոդվածը, 3-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերը, 6-րդ հոդվածը, 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը) 2010թ.

**Համառոտ նկարագիր**

Կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ ԱԱՀ վճարող համարվող անձինք կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ապրանք մատակարարելիս կատարվող ծառայություն մատուցելիս պարտավոր են դուրս գրել օրենքի համաձայն հարկային հաշիվ համարվող փաստաթուղթ, եթե այդ գործարքը ենթակա է ԱԱՀ-ի 20% (16.67%՝ հաշվարկային) դրույքաչափով հարկման: Հարկային հաշիվը դուրս է գրվում ապրանք մատակարարելու կատարվող կողմից ծառայությունն ընդունելու օրը՝ մինչև այդ գործարքի մասով ԱԱՀ-ի պարտավորության ծագման պահը: Մանրածախ առևտրի և բնակչությանը ծառայություններ մատուցման ոլորտներում հարկային հաշիվ դուրս է գրվում միայն գնորդ կազմակերպության կաֆիզիկական անձի պահանջով: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը ապրանքի մատակարարում համարվող և ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների մասով օրենքով սահմանված կարգով կարող է դուրս գրել հարկային հաշիվ՝ միայն գնորդ կազմակերպության կատարված ձեռնարկատիրոջ պահանջով, և եթե այդ ֆիզիկական անձն ունի հարկ վճարողի հաշվառման համար:

ԱԱՀ վճարող համարվող անձինք անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կատարվող կառավարչական հիմնարկներին ապրանքներ մատակարարելիս կամ ծառայություններ մատուցելիս պարտավոր են դուրս գրել հարկային հաշիվ չհանդիսացող հաշվարկային փաստաթղթեր կամ օրենքով սահմանված դեպքերում տրամադրել հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններ:

Սույն օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ հարկային հաշիվներ դուրս չեն գրվում նաև՝

- 1) այն գործարքների մասով, որոնց վրա չի տարածվում սույն օրենքի գործողությունը (ներառյալ՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեությանը վերաբերող գործարքները),
- 2) այն գործարքների մասով, որոնք ՀՀ միջազգային պայմանագրերի համաձայն ազատվում են ԱԱՀ-ից,
- 3) պետական կառավարչական հիմնարկներին ապրանքների մատակարարման կատարվող ծառայությունների մատուցման գործարքների մասով:

Սահմանվում է, որ 2010թ. հուլիսի 1-ից հարկային հաշիվներ կարող են դուրս գրվել էլեկտրոնային եղանակով՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով կամ հարկային մարմնից ձեռք բերված հարկային հաշիվների ձևերի լրացման միջոցով: Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներին վերաբերվող կարգերը պետք է սահմանվեն ՀՀ կառավարության կողմից, իսկ հարկային մարմնի կողմից հարկային հաշիվների տրամադրման, դրանց լրացման, դուրսգրման, պահպանման ստացված հարկային հաշիվների օգտագործման վերաբերյալ հաշվետվության ներկայացման խոտանված, անվավեր ճանաչված և չօգտագործված հարկային հաշիվների վերադարձման կարգերը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից:

Օրենքով հստակեցվում են հարկային հաշիվների պահպանման ժամկետները:

Կատարված մեկ այլ լրացմամբ սահմանվում է, որ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի խախտմամբ կամ ապօրինի ձեռքբերված կամ պատճենահանված ձևերի լրացմամբ հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում հարկային հաշիվ դուրս գրողը վճարում է տուգանք՝ հարկային հաշվի լրիվ արժեքով հատուցման գումարի (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը) կրկնակիի չափով, բայց ոչ պակաս 5 միլիոն դրամից:

Փաստաթուղթ	«Ալցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	29 հոկտեմբերի, 2009թ., ՀՕ-202-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 60 (726), 02.12.09թ.
Ուժի մեջ է	1 հունվարի, 2010թ.

**Համառոտ նկարագիր**

Կատարված լրացմամբ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ՀՀ տարածքում արտադրվող և ՀՀ ներմուծվող ԱՏԳ ԱԱ 2203, 2206, 2207, 2208 և 2402 ծածկագրերին դասվող ապրանքների նկատմամբ կիրառվելու է «Ակցիզային պահեստ» ռեժիմը: «Ակցիզային պահեստ» ռեժիմը ենթադրում է այդ ապրանքների առաքման, տրամադրման, տեղափոխման (ներառյալ՝ հարկ վճարողի մանրածախ առևտրի օբյեկտ), դրանց իրացման ծավալների ու գների գրանցման և գործարքների փաստաթղթավորման նկատմամբ հարկային մարմինների կողմից հսկողության իրականացում՝ այդ ապրանքների արտադրության կամ ներմուծման պահից մինչև այդ ռեժիմը դադարելու պահը:

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է ակցիզային պահեստում գտնվող ապրանքների հաշվառման, բացթողման և հսկողության իրականացման կարգը:

Կատարված մեկ այլ լրացմամբ սահմանվում է, որ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար «Ակցիզային պահեստ» ռեժիմի գործողությունը պարտադիր լինելու դեպքում այդ ապրանքների՝ ակցիզային պահեստի տարածքից դուրս պահպանման, հարկ վճարողի մոտ նշանակված հարկային ծառայողի հսկողությունը շրջանցելով՝ այդ ապրանքների առաքման տրամադրման կամ տեղափոխման դեպքերում ակցիզային հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ օրենսդրությամբ սահմանված կարգով այդ ապրանքների համար հաշվարկվող իրացման շրջանառության (տեղափոխման կամ ակցիզային պահեստի տարածքից դուրս պահպանման դեպքում՝ իրացման սովորաբար կիրառվող գներով հաշվարկվող արժեքի) 100%-ի չափով, որը հանդիսանում է այդ ապրանքների մասով վերջնական հարկային պարտավորություն:

Օրենքով սպիրտի և ալկոհոլային խմիչքների համար սահմանվել է օտարման նվազագույն գին՝ 1 լիտրի համար 3500 դրամ (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով):

Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	29 հոկտեմբերի, 2009թ., ՀՕ-201-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 60 (726), 02.12.09թ.
Ուժի մեջ է	12 դեկտեմբերի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Օրենքը տարածվում է 01.01.09թ.-ից հետո ծագող հարաբերությունների վրա: Կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ հարկվող շահույթը որոշելիս առանց հիմնավորող փաստաթղթերի համախառն եկամուտը նվազեցվելու է այդ տարվա ընթացքում կատարված՝ ՀՀ տարածքում փաստաթղթերով չհիմնավորված այն ձեռքբերումների մասով, որոնցից «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն 11 տոկոս դրույքաչափով հաշվարկվել է պետական բյուջե է վճարվել եկամտահարկ: Այդ ծախսերը նվազեցման ենթակա են միանվագ գործարքի մասով (այդ թվում՝ եկամտահարկի գումարը) 300.0 հազար դրամը, իսկ ամսական կտրվածքով՝ 3.0 մլն դրամը (այդ թվում՝ եկամտահարկի հանրագումարը) չգերազանցելու պայմանով:

Փաստաթուղթ	«Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	18 նոյեմբերի, 2009թ.
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 64 (730), 16.12.09թ.
Ուժի մեջ է	26 դեկտեմբերի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում վերացվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմիններում հարկային և մաքսային ծառայողների իրավունքների և պարտականությունների միջև տարբերությունները, մաքսային ծառայությունում ներդրվել է մաքսային ծառայողների ռոտացիայի սկզբունքը, փոփոխություններ են կատարվել մաքսային ծառայողների ատեստավորմանը վերաբերող որոշ դրույթներում՝ ներդնելով փաստաթղթային ատեստավորման եղանակը, ինչպես նաև սահմանելով ատեստավորման արդյունքում մաքսային ծառայողին զբաղեցրած պաշտոնից իջեցնելու վերաբերյալ դրույթ և դրա հիմքերը: Մաքսային ծառայողի պարտականությունները սահմանող հոդվածում նախատեսվել է մաքսային ծառայողի վարքագծի կանոնների պահպանման վերաբերյալ դրույթ, որոնց խախտման դեպքում նախատեսվում է պատասխանատվություն: Սահմանվել է նաև դրույթ, համաձայն որի՝ մաքսային ծառայողի

վարքագծի կանոնները խախտելու համար մաքսային ծառայողին հերթական հատուկ կոչման ներկայացնելը կարող է պատճառաբանված մերժվել՝ ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Օրենքի 37-րդ հոդվածում կատարվել է փոփոխություն համաձայն որի մաքսային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել վերադաս մաքսային մարմնի գանգատարկման հաձնաժողովին. սահմանվել է գանգատարկման հանձնաժողովի գործունեության կարգը: Սահմանվել է նաև դրույթ քրեական գործերով որպես մեղադրյալ ներգրավված մաքսային ծառայողի պաշտոնական լիազորությունների կասեցման վերաբերյալ:

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	29 հոկտեմբերի, 2009թ., ՀՕ-200-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 60 (726), 02.12.09թ.
Ուժի մեջ է	1 հունվարի, 2010թ.

### **Համառոտ նկարագիր**

Օրենքով սահմանվել է, որ

1. հարկերի հաշվարկման և վճարման համար սահմանված կարգի ու հարկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ընթացիկ հարկային հսկողություն իրականացնելու նպատակով վերադաս հարկային մարմինը հարկ վճարողի մոտ նշանակում է հարկային մարմնի ներկայացուցիչ (ներկայացուցիչներ): Հարկային մարմնի ներկայացուցիչը նշանակվում է հարկային մարմնի ղեկավարի հրապարակած գրավոր հրամանով: Օրենքով սահմանվել են հարկ վճարողի մոտ հարկային մարմնի ներկայացուցիչ նշանակելու հիմքերը:

2. Ուժը կորցրած է ճանաչվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28.4-րդ հոդվածը, որը տարածվում է 2009թ հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա: Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ կառավարության 22.01.09թ. N129-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան առանց երկկողմանի հաշվարկային փաստաթղթերի կամ հաշվարկային փաստաթղթերում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով կատարված գործարքների վերաբերյալ հարկային մարմիններ տեղեկություններ չեն ներկայացվելու:

Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 հոկտեմբերի, 2009թ., ՀՕ-193-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 58(724) 25.11.09թ.
Ուժի մեջ է	5 դեկտեմբերի, 2009թ.

### **Համառոտ նկարագիր**

Կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող շահաբաժինները ենթակա են հարկման 10 տոկոս դրույքաչափով, եթե ՀՀ է այլ երկրների միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին գործող համաձայնագրերով նախատեսված չէ ավելի ցածր դրույքաչափ:

### **1.2 ՀՀ կառավարության որոշումներ**

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆոնդային բորսայում հասարակ անվանական բաժնետոմսեր ցուցակած ընկերություններին ցուցակման նպատակով որոշ ծառայությունների ստացման համար ծառայություններ մատուցողներին վճարված ավելացված արժեքի հարկի գումարների փոխհատուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	29 հոկտեմբերի, 2009թ., 1336-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 63 (729), 09.12.09թ.
Ուժի մեջ է	19 դեկտեմբերի, 2009թ.

### **Համառոտ նկարագիր**

Որոշմամբ հաստատված կարգով սահմանվել են ՀՀ տարածքում գործող ֆոնդային բորսայում հասարակ անվանական բաժնետոմսեր ցուցակած ընկերությունների համար ԱԱՀ-ի գումարների

փոխհատուցման ընթացակարգը և փոխհատուցում ստանալու համար ներկայացվող փաստաթղթերը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2010» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը կիրառության մեջ դնելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	12 նոյեմբերի, 2009թ., N1283-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր №58 (724) 25.11.2009թ.
Ուժի մեջ է	26 նոյեմբերի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Որոշմամբ նախատեսվում է կիրառության մեջ դնել ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներմուծվող ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի դրոշմավորման համար «2010» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆոնդային բորսաների կողմից հասարակ անվանական բաժնետոմսեր ցուցակած կամ ապացուցակած ռեզիդենտ ընկերությունների վերաբերյալ տեղեկությունները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	29 հոկտեմբերի, 2009թ., N1286-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 58 (724), 25.11.2009թ.
Ուժի մեջ է	5 դեկտեմբերի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Որոշմամբ հաստատվում է ՀՀ տարածքում գործող ֆոնդային բորսաների կողմից հասարակ անվանական բաժնետոմսեր ցուցակած կամ ապացուցակած ռեզիդենտ ընկերությունների վերաբերյալ տեղեկությունները ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացնելու կարգը, ըստ որի մասնավորապես ՀՀ տարածքում գործող ֆոնդային բորսաները յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը ներառյալ, իրենց մոտ հասարակ անվանական բաժնետոմսեր ցուցակած կամ ապացուցակած ռեզիդենտ ընկերությունների վերաբերյալ տեղեկություններ են ներկայացնում ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ համաձայն որոշմամբ հաստատված ձևի:

Առաջին անգամ տեղեկություններ ներկայացնելիս՝ ֆոնդային բորսաները ներկայացնում են առանձին տեղեկություններ 2009թ.-ի այն բոլոր եռամսյակների համար, որոնք ներառում են 2009թ.-ի հուլիսի 9-ի դրությամբ ցուցակման մեջ գտնվող կամ 2009թ.-ի հուլիսի 9-ից հետո ցուցակված յուրաքանչյուր ռեզիդենտ ընկերության կողմից հասարակ անվանական բաժնետոմսերի ցուցակման (ապացուցակման) օրը կամ առաջին անգամ հանրությանը պատկանող բաժնետոմսերի առնվազն 20 տոկոս տեսակարար կշիռ ապահովելու ամիսը, կամ առաջին անգամ առնվազն 100 բաժնետեր ապահովելու ամիսը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 31-ի N960-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	12 նոյեմբերի, 2009թ., N1329-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 61(727), 03.12.2009թ.
Ուժի մեջ է	13 դեկտեմբերի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ռազմական տեխնիկայի և մարտական զենքի զինամթերքի, մասերի ու պարագաների տեղափոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 29-ի N124 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N960-Ն որոշումը, որով սահմանվում էր ՀՀ մաքսային ռազմական տեխնիկայի և մարտական զենքի զինամթերքի, մասերի ու պարագաների

ցանկն ու տեղափոխման կարգը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1330-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	8 հոկտեմբերի, 2009թ., N1280-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 58 (724), 25.11.2009թ.
Ուժի մեջ է	26 նոյեմբերի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Որոշմամբ սահմանվել է, որ.

1) մինչև **2009թ. նախավերջին աշխատանքային օրը** ֆիզիկական անձինք 2009թ. 3-րդ եռամսյակին վերաբերող և վիճակահանությունների արդյունքում չշահած կտրոնների խմբաքանակները կարող են ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչություն, որոնց համար բոնուսների հաշվարկը կատարվելու է ՀՀ կառավարության 30.10.2008թ. N1330-Ն որոշման N3 հավելվածով հաստատված չափերով,

2) ֆիզիկական անձինք բոնուսներ ստանալու համար կարող են մինչև 2009թ. վերջին աշխատանքային օրը ներկայանալ նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ հետ բոնուսներ հաշվարկելու և տրամադրելու նպատակով պայմանագիր կնքած` ՀՀ տարածքում գործող բանկեր: Բոնուսներ հաշվարկող և տրամադրող բանկերի անվանումները և բանկի բաժանմունքների գտնվելու վայրի հասցեները պետք է հրապարակվեն ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից,

3) ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչություն կտրոնների խմբաքանակներ կարող են ներկայացնել **ՀՀ տարածքում 2009 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում ապրանքներ և ծառայություններ անմիջականորեն ձեռքբերող (ստացող) ֆիզիկական անձինք:** Խմբաքանակում ներառված կտրոններն իրենց դարձերեսներին պետք է ստորագրված լինեն միայն այն ներկայացուցող անձի կողմից: **Կտրոնների դարձերեսներին չպետք է լինեն մեկից ավել ստորագրություններ,**

4) **2009թ. տրորող եռամսյակի կտրոնները մասնակցելու են վիճակահանությանը, սակայն դրանք համար 2010թ. բոնուսներ չեն տրամադրվելու,**

5) **2010 թվականի հունվարի 1-ից սկսած** յուրաքանչյուր եռամսյակի ընթացքում տրամադրված և վիճակահանությունների արդյունքում չշահած կտրոնների խմբաքանակները ներկայացվելու են բոնուսներ տրամադրող մարմին (ՀՀ տարածքում գործող բանկեր): ՀՀ տարածքում ապրանքներ և ծառայություններ անմիջականորեն ձեռքբերող (ստացող) ֆիզիկական անձը բոնուս ստանալու համար **կարող է կազմել և ներկայացնել 50-ից մինչև 500 (ներառյալ) կտրոն պարունակող խմբաքանակ, որոնց վրա արտագույն գործարքների ընդհանուր արժեքների հանրագումարը չպետք է պակաս լինի հարյուր հազար դրամից: Ներկայացված խմբաքանակի համար բոնուսը հաշվարկվելու է խմբաքանակում ներառված կտրոնների վրա արտագույն գործարքների արժեքների հանրագումարի 1 տոկոսի չափով:** Ներկայացվող խմբաքանակում **չեն կարող ներառվել** բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի, ավտոտրանսպորտային միջոցների գազային (գազալիցքավորման), շահումով խաղերի և խաղատների կազմակերպման, համակարգչային խաղերի կազմակերպման, բաղնիքների և ցնցողարանների կազմակերպման, ավտոտրանսպորտային գործունեության, վարսավիրական ծառայությունների մատուցման, լուսանկարչական լաբորատորիաների գործունեության, ավտոկանգառների գործունեության, կապի բնագավառում կոմիսիոներների և գործակալների գործունեության (բացառությամբ մանրածախ վաճառքի կա բնակչությանը ծառայությունների մատուցման) և կրթության բնագավառի համար կիրառվող ՀԴՄ-ների տրամադրած կտրոնները:

**1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ**

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվող անձանց կողմից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման հարցի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	28 հոկտեմբերի, 2009թ., N8
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 32 (350), 15.12.2009թ.



Ուժի մեջ է	25 դեկտեմբերի, 2009թ.
<p><b>Համառոտ նկարագիր</b></p> <p>Պաշտոնական պարզաբանմամբ պարզաբանվում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված գործարքներին ուղղակիորեն վերաբերող ձեռքբերումների մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում հաշվանցված ԱԱՀ-ի գումարների վերաձևակերպման դրույթը կիրառելի չէ այն անձանց նկատմամբ, որոնք օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան տվյալ օրացուցային տարում դադարում են համարվել ԱԱՀ վճարող:</p>	
Փաստաթուղթ	«Հարկային մարմնի կողմից ներկայացված կատարողական թերթերի հիման վրա դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցված կատարողական վարույթներով անցկացվող հարկադիր էլեկտրոնային աճուրդներով իրացվող գույքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի համատեղ հրաման
Ամսաթիվը և համարը	26 նոյեմբերի, 2009թ., 291-Ն, N3647-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 32 (350), 15.12.2009թ.
Ուժի մեջ է	25 դեկտեմբերի, 2009թ.
<p><b>Համառոտ նկարագիր</b></p> <p>Հրամանով նախատեսվում է, որ հարկային մարմնին պետք է յուրաքանչյուր տասնօրյակի վերջին օրվա դրությամբ թարմացված տվյալներով էլեկտրոնային եղանակով տեղեկատվություն տրամադրվի հարկային մարմնի կողմից ներկայացված կատարողական թերթերի հիման վրա դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցված կատարողական վարույթներով անցկացվող հարկադիր էլեկտրոնային աճուրդներով իրացվող գույքի վերաբերյալ:</p>	
Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2008 թվականի հունիսի 6-ի N 06-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	18 նոյեմբերի, 2009թ., N 3321-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 32 (350) 15.12.2009թ.
Ուժի մեջ է	25 դեկտեմբերի, 2009թ.
<p><b>Համառոտ նկարագիր</b></p> <p>Կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ համապատասխան ստորաբաժանման համակարգող ՊԵԿ նախագահի տեղակալի հիմնավորմամբ հարկային մարմնի ղեկավարի կողմից Գանգատարկման հանձնաժողովի անդամը կարող է փոխարինվել սահմանված պահանջներին բավարարող մեկ այլ ծառայողով:</p>	

**2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ**

Փաստաթուղթ	«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	17 նոյեմբերի, 2009թ., ՀՕ-207-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 64 (730), 16.12.2009թ
Ուժի մեջ է	26 դեկտեմբերի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Օրենքով նախատեսվում է, որ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, փոփոխման վերաձևակերպման) և ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների չափերը սահմանվում են յուրաքանչյուր տարվա բյուջեի մասին օրենքի առանձին հավելվածով՝ Կարգավորողի (հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի) ներկայացմամբ:

Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն ստանալու համար հայցվոր ռադիոհաճախականության (ռադիոհաճախականությունների տիրույթի որոշակի հատվածի) տրամադրման վճարի 1 տոկոսը վճարվում է նախքան թույլտվության տրամադրումը, իսկ 99 տոկոսը՝ Կարգավորողի կողմից ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման մասին որոշումն ընդունվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, փոփոխման, վերաձևակերպման համար սահմանված պարտադիր վճարը վճարվում է նախքան Կարգավորողի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար և ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը:

Կարգավորողն իր սահմանած ձևով մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճար վճարողներին գրավոր ծանուցում է տվյալ եռամսյակի համար վճարման ենթակա պարտադիր վճարների և դրանց չափերի մասին:

Ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարի հաշվարկման և վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Կարգավորողը, **իսկ վերահսկողությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է հարկային մարմինը :**

Փաստաթուղթ	«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 հոկտեմբերի, 2009թ., ՀՕ-195-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 60 (726), 02.12.09թ.
Ուժի մեջ է	1 հունվարի, 2010թ.

**Համառոտ նկարագիր**

Կատարված լրացումով սահմանվում է, որ անհատ ձեռնարկատերը յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ մինչև օրացուցային տարվան հաջորդող մարտի 1-ը «Հարկերի մասին» ՀՀ օրենքում սահմանված կարգով և պայմաններով էլեկտրոնային եղանակով կամ փոստով լիազորված մարմին է ներկայացնում կամ հանձնում ըստ պատկանելության տարեկան եկամուտների մասին հայտարարագիրը:

Կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ սոցիալական վճարի հաշվետվությունները լիազորված մարմին են ներկայացվում էլեկտրոնային եղանակով կամ ուղարկվում փոստով՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և պայմաններով, կամ հանձնվում են ըստ պատկանելության:

Փաստաթուղթ	«Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
------------	---

Ամսաթիվը և համարը	27 հոկտեմբերի, 2009թ., ՀՕ-197-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 60 (726), 2.12.09թ.
Ուժի մեջ է	1 հունվարի, 2010թ.

**Համառոտ նկարագիր**

Կատարված փոփոխությանը նախատեսվում է, որ հայտարարատուն գույքի և եկամուտների հայտարարագիրը կարող է ներկայացնել էլեկտրոնային եղանակով կամ փոստով՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և պայմաններով, կամ անձամբ հանձնել ըստ պատկանելության կաս ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորագիր ունեցող անձի միջոցով Լիազորված անձի միջոցով հայտարարագիրը ներկայացնելու դեպքում հայտարարագրին կից ներկայացվում է հայտարարատուի անձը (ինքնությունը) հաստատող՝ օրենսդրությամբ սահմանված տեսակի փաստաթղթի պատճենը:

Փաստաթուղթ	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	29 հոկտեմբերի, 2009թ., ՀՕ-199-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 60 (726), 2.12.09թ.
Ուժի մեջ է	1 հունվարի, 2010թ.

**Համառոտ նկարագիր**

Կատարված փոփոխությանը պատասխանատվություն է սահմանվում սպիրտի և ալկոհոլային խմիչքների համար օրենքով սահմանված օտարման նվազագույն գնից ցածր գնով օտարման համար՝ տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

Փաստաթուղթ	«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 հոկտեմբերի, 2009թ., ՀՕ-196-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 60 (726) 2.12.2009թ.
Ուժի մեջ է	1 հունվարի, 2010թ.

**Համառոտ նկարագիր**

Օրենքով սահմանվել է, որ հանրային ծառայության կարգավորման պարտադիր վճար վճարողները կարգավորման պարտադիր վճարի հաշվետվությունները ներկայացնում են էլեկտրոնային եղանակով կամ ուղարկում են փոստով՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և պայմաններով, կամ հանձնում են ըստ պատկանելության:

**3.Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ**

**3.1 Կառուցվածք և գործառույթներ**

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 23.11.09թ. N1/2229 և 26.11.09թ. N1/2854 հրամաններով փոփոխություններ են կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխանաբար Ներքին դիտարկումների և վերահսկողության ու Հարկային և մաքսային վարչարարության ռազմավարության և պլանավորման վարչությունների կառուցվածքներում:

**3.2 Ծրագրեր և կատարողականություն**

**3.2.1 Ծրագրեր և կատարողականություն /հարկային ծառայության մասով/**

I. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 23.11.09թ. թիվ 3490-Ա հրամանով հաստատվել է հարկային համակարգում հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծման վերաբերյալ ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը: Ծրագրի նպատակն է սպասարկման կենտրոնների ստեղծման միջոցով բարձրացնել հարկ վճարողների սպասարկման մակարդակը՝ խթանելով հարկ վճարողների ինքնագնահատման համակարգի զարգացմանը և հնարավորինս նվազեցնելով հարկ վճարողների վարչարարական ծախսերը: Սպասարկման կենտրոնների գործարկմամբ նախատեսվում է բարձրացնել հարկ վճարողների կողմից հարկերի վճարման և հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման մատչելիությունը, հարկային օրենսդրության վերաբերյալ բացատրական աշխատանքների մակարդակը, ընդլայնել իրազեկման բնույթի մատուցվող ծառայությունները՝ ապահովելով սպասարկման ծառայությունների

միասնականությունը և հասանելիությունը:

Ծրագրով սահմանվել են նաև սպասարկման կենտրոնների գործառույթները, սպասարկման կենտրոնների կողմից սպասարկվող հարկ վճարողների շրջանակները, ինչպես նաև սպասարկման կենտրոնների աշխատողների կազմը և աշխատանքային գրաֆիկը: Միաժամանակ, սահմանվել են հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծման միջոցառումների ցանկը և ժամանակացույցը:

**II. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 20.11.09թ. թիվ 3325-Ս հրամանով հաստատվել է հարկերի վճարումից խուսափելու ռիսկերի բացահայտման մոտեցումների վերաբերյալ հայեցակարգը:** Հայեցակարգը նպատակ ունի վերհանել հարկային վարչարարության այնպիսի մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան բացահայտել հարկ վճարողների այնպիսի գործողությունները, որոնց հիմնական դրդապատճառներն են հարկերի վճարումից խուսափելը: Հայեցակարգով նախատեսվում է ներդնել **նոր վերահսկողական գործիքներ**, որոնք թույլ կտան հստակ դասակարգել հարկերից խուսափման ռիսկերը, բացահայտել դրանց դրսևորման ձևերը, ինչպես նաև ապագայում սահմանել պատասխանատվության միջոցները և դրանց կիրառման անհրաժեշտությունը:

### ***3.2.2 Ծրագրեր և կատարողականություն /մաքսային ծառայության մասով/***

Եվրոպական հանձնաժողովի օժանդակությամբ «Թայքս» ծրագրի շրջանակներում սույն թվականի դեկտեմբերի 14-16-ը Եվրահանձնաժողովի փորձագետը Երևանում անցկացրել է «Էլեկտրոնային հայտարարագրում» թեմայով սեմինար-քննարկում, որին մասնակցել են ՀՀ ԿԱ ՊԵԿ կենտրոնական ապարատի և տարածաշրջանային ստորաբաժանումների ներկայացուցիչներ՝ թվով 25 հոգի: Մեմինարի միջոցով մասնակիցները հնարավորություն են ստացել տեղեկանալ Եվրամիության արդիականացված մաքսային օրենսգրքի այն դրույթներին, որոնք առնչվում են էլեկտրոնային ստորագրությունների, էլեկտրոնային վճարումների և էլեկտրոնային հաղորդագրությունների կիրառման Եվրամիության անդամ երկրների փորձին՝ միաժամանակ ներկայացնելով ապրանքների էլեկտրոնային հայտարարագրման՝ Հայաստանում գործող ընթացակարգերն ու դրանց վերաբերող մաքսային օրենսդրությունը:

### ***3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների***

20.11.2009թ.-ից մինչև 20.12.2009թ.-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են թվով 23 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 32 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 20.11.2009թ.-ից մինչև 20.12.2009թ.-ը քննարկվել է թվով 12 բողոք, որից՝

- բավարարվել է 2 բողոք,
- կարճվել է 1 բողոք,
- մերժվել է 9 բողոք:

### ***3.4 Միջազգային համագործակցություն***

Սույն թվականի դեկտեմբերի 7-ից 11-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ պատվիրակությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Գ Խաչատրյանի գլխավորությամբ գործուղվել է ք. Բրյուսել՝ մասնակցելու Համաշխարհային մաքսային կազմակերպության Քաղաքականության հանձնաժողովի 62-րդ հերթական նստաշրջանի և «Եկամուտների կառավարում. մարտահրավերներ և հնարավորություններ տնտեսական ճգնաժամի պայմաններում» խորագրով համաժողովի աշխատանքներին:

Նիստերի ընթացքում քննարկվել են համաշխարհային առևտրի պարզեցման և անվտանգության շրջանակային ստանդարտների ներդրման ընթացքի, սահմանների ինտեգրացված կառավարման մաքսային մարմինների կարողությունների հզորացման, Կիոտոյի վերանայված կոնվենցիային միանալու անհրաժեշտության, եկամուտներ հավաքագրող ծառայություններում կառուցվածքային փոփոխությունների ազդեցության, ինչպես նաև մարդկային և ֆինանսական ռեսուրսների կառավարման հետ կապված մի շարք թեմաներ:

Ընդունվել են մի շարք խորհրդատվական որոշումներ Կիոտոյի վերանայված կոնվենցիային միանալու անհրաժեշտության, սահմանների ինտեգրացված կառավարման վերաբերյալ Համաշխարհային մաքսային կազմակերպության անդամ երկրների միջև ակտիվ երկխոսություն սկսելու, ինչպես նաև եկամուտների հավաքագրման գործընթացում կառուցվածքային

փոփոխությունների անհրաժեշտության, տնտեսական ճգնաժամի պայմաններում ի հայտ եկող նոր մարտահրավերներին դիմակայելու վերաբերյալ:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և ՈԻԿրահինայի պետական մաքսային ծառայության միջև մաքսային վիճակագրական տեղեկատվության փոխանակման հարցերով համագործակցության կարգի մասին» արձանագրություն հաստատելու մասին» ՀՀ նախագահի հրամանագիր
Ամսաթիվը և համարը	2 դեկտեմբերի, 2009թ., ՆՀ-295-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 64 (730) 16.12.09թ.
Ուժի մեջ է	17.12.2009թ.

**Համառոտ նկարագիր**

Հրամանագրով հաստատվում է 16.10.2009թ.-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և ՈԻԿրահինայի պետական մաքսային ծառայության միջև մաքսային վիճակագրական տեղեկատվության փոխանակման հարցերով համագործակցության կարգի մասին» արձանագրությունը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի 2001 թվականի ապրիլի 26-ի N02/520 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	12 նոյեմբերի, 2009թ.,N3106-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 32(350) 15.12.09թ.
Ուժի մեջ է	15 դեկտեմբերի, 2009թ.

**Համառոտ նկարագիր**

Հրամանով ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ պետական եկամուտների նախարարի 26.04.2001թ. «ՀՀ կառավարության և Եվրահամայնքի Հանձնաժողովի միջև կնքված ֆինանսավորման հուշագրերում սահմանված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով նախատեսված արտոնությունների կիրառման մասին» հրահանգը հաստատելու մասին» N02/520 հրամանը:

**3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում**

**3.5.1 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային ծառայության մասով/**

2009թ. նոյեմբերի 25-ին կայացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի թափուր պաշտոնների համալրման նպատակով հերթական մրցույթը, որին մասնակցելու դիմում էին ներկայացրել 203 քաղաքացիներ: Մրցույթի արդյունքում համալրվել է հարկային մարմնի 37 թափուր պաշտոն:

2009թ. դեկտեմբերի 11-ին ավարտվեց Երևան քաղաքի հարկային տեսչությունների հարկային ծառայողների ատեստավորման գործընթացը: Ատեստավորմանը մասնակցել են 549 հարկային ծառայողներ: Ատեստավորված հարկային ծառայողներից 108-ը մրցութային և ատեստավորման հանձնաժողովի որոշմամբ չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին: Նրանցից 58-ը ազատվել է աշխատանքից, իսկ 50-ը՝ իջեցվել զբաղեցրած պաշտոնից:

Դեկտեմբերի 2-ից ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում կազմակերպվել է «Հայաստանի հարկային համակարգ» ուսումնական դասընթաց, որին մասնակցել են 69 դիմորդներ:

**3.5.2 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /մաքսային ծառայության մասով/**

2009թ. նոյեմբերի 25-ին կայացել է մաքսային ծառայության 3 թափուր պաշտոնների համալրման հայտարարված մրցույթը: Մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել 3 մասնակից, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 01.12.2009թ. հրամաններով նշանակվել են համապատասխան պաշտոնների:

**3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն**

**3.6.1 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն /հարկային ծառայության մասով/**

2009թ. դեկտեմբեր ամսին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՇ «Թեժ գծով» ստացվել է 317 բողոք և առաջարկություն: Բողոքների հիմնական մասը վերաբերել է պարզևավճարների տրամադրման նոր կարգին պայմաններին, ժամկետներին, ՏՏՏ-ներում առաջացած հերթերին, դեկտեմբերի վիճակահանության շահող թվերին և շահումների տրամադրման կարգին, ինչպես նաև վիճակահանությանն առնչվող

բազմաթիվ այլ հարցերի:

Առաջարկությունները հիմնականում վերաբերել են պարզևավճարների տրամադրման նոր կարգին և պայմաններին: Բողոքների մի մասն էլ առնչվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման փաստերին: Հարցերի մի սովոր խումբ է վերաբերել է հարկային օրենսդրությանը: Մասնագիտական պարզաբանումներ ստանալու համար քաղաքացիներին տրամադրվել են ՏՀՏ-ների համապատասխան բաժինների հեռախոսահամարները:

**3.6.2 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և “Թեժ գծի” վերլուծություն /մաքսային ծառայության մասով/**

Նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 20-ը “Թեժ գծով” ստացվել է 350-400 զանգ Ջանգահարողների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատվություն կա խորհրդատվության կարիք է ունեցել:

Նշված ժամանակահատվածում արձանագրվել է 5 բողոք, որոնք հիմնականում վերաբերել են ապրանքի մաքսային արժեքի որոշմանը, մաքսային ընթացակարգերի, ինչպես նաև արտերկրից ուղարկված ծանրոցների մաքսազերծման հետ կապված խնդիրներին:

Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքացուն կամ զանգահարել և պարզաբանում են տվել խնդրի առնչությամբ, կամ էլ հրավիրել են ՊԵԿ մաքսային ծառայության համապատասխան ստորաբաժանում հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրաժեշտ պարզաբանումներ տալու նպատակով:

Նշված ժամանակահատվածում «Թեժ գծով» օրական արձանագրվել է միջինը 10-15 զանգ: Նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 20-ը ստացված բոլոր բողոքներին արձագանքվել է:

**3.7 Հարկային և մաքսային թվերի համառոտագիր**

**3.7.1 Հարկային վիճակագրության մի քանի թվեր**

	Ցուցանիշ	2009 թվական		
		նոյեմբեր	հունվար-նոյեմբեր	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-նոյեմբեր) %
1	2	3	4	5
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ (թվաքանակ)	1.321.0	14.607.0	69.8
2	Հարկային մարմնի կողմից պետ. բյուջե հավաքագրված եկամուտներ (մլն. դրամ), այդ թվում՝	35.331.5	358.161.5	90.5
2.1	ԱԱՀ	8.487.6	76.056.6	76.0
2.2	Շահութահարկ	5.715.2	75.120.1	95.0
2.3	Ակցիզային հարկ	544.3	5.383.4	83.3
2.4	Եկամտահարկ	5.336.8	52.925.7	111.9
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	9.153.5	92.511.1	101.7
2.6	Այլ	6.094.1	56.163.6	77.9
3	Հարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	2.070.0	24.750.0	175.4
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	1.563.6	30.023.7	83.6

### 3.7.2 Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2008թ.		2009թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ %	
		Հունվար-նոյեմբեր	նոյեմբեր	հունվար-նոյեմբեր	նոյեմբեր	Հունվար-նոյեմբեր	նոյեմբեր
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	262 262	29 642	205 015	24 336	78.2	82.1
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	1 542 199	145 525	1 333 345	172 196	86.5	118.3
2.1	արտահանում (մլն դրամ)	305 894	20 357	254 209	28 099	83.1	138.0
2.2	ներմուծում (մլն դրամ)	1 236 306	125 168	1 079 136	144 097	87.3	115.1
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	32 131	5 288	21 380	3 595	66.5	68.0